

# 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

## 1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

### 1.1.1. 2003թ. հունվար-մարտի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի ծավալը, ընթացիկ գներով, 2003թ. հունվար-մարտին կազմել է 189582.4 մլն.դրամ և ընթացիկ տարվա հունվար-փետրվարի համեմատությամբ ավելացել է 77906.6 մլն.դրամով:

ՀՆԱ-ի աճի տեմպը 2003թ. հունվար-մարտին 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 111.4% 2002թ.՝ հունվար-մարտի 107.4% ցուցանիշի դիմաց:

Արձանագրված ՀՆԱ-ի արտադրության հավելվածի 11.4 տոկոսային կետից 8.2 տոկոսային կետն ապահովվել է ՀՆԱ արտադրության բազային 5 ճյուղերի, իսկ 2.0 տոկոսային կետը ապրանքների և ներմուծման զուտ հարկերի հաշվին, որոնք համապատասխանաբար 1.3 և 1.9 տոկոսային կետով ավելի են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշներից:

ՀՆԱ արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

(%)

	Աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատ- վածի նկատմամբ		ՀՆԱ հավելվածի կազմը		ՀՆԱ կառուցվածքը ընդամենի նկատմամբ	
	հունվար- մարտ		հունվար- մարտ		հունվար- մարտ	
	2002	2003	2002	2003	2002	2003
ՀՆԱ, հիմնական գներով <sup>1</sup>	108.8	111.0	7.3	9.33	84.3	84.17
այդ թվում						
արդյունաբերություն	113.9	110.6	3.9	3.02	28.4	28.64
գյուղատնտեսություն	105.3	106.7	0.6	0.77	11.5	11.09
շինարարություն	112.4	133.5	0.7	1.83	5.6	6.36
տրանսպորտ և կապ	105.6	112.5	0.3	0.89	7.1	7.41
առևտուր և հանրային սնունդ	108.8	110.7	1.4	1.71	16.0	15.86
Ընդամենը, բազային ճյուղերը	110.1	112.0	6.9	8.22	68.6	69.34
Ընդամենը, այլ ճյուղեր	103.4	107.1	0.4	1.11	15.7	14.83
Ապրանքների և ներմուծման զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	100.6	112.9	0.1	2.02	15.7	15.83
<b>ՀՆԱ, շուկայական գներով</b>	<b>107.4</b>	<b>111.4</b>	<b>7.4</b>	<b>11.4</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

<sup>1</sup> Հիմնական գներով տվյալները բերված են ներառյալ ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները: